

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Օտարագրադարացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакція «Мелк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիգուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՂԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Բազուկ: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Թիֆլիս: Խառնի: Յոճաստան: Արտաքին լուրեր: ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ: ՀԵՌԱՌԻՐՆԵՐ: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ: ՆԵՐ: ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Նամակ Առաւելաբեր:

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՍՏԱԿ ԲԱՆԱՍԻՐ

Ապրիլի 28-ին

Զարմանալի փոփոխել է Բազուկն, որ չէ անցնում որ մարդասպանութիւն չը պատահի թէ ծածուկ և թէ հրապարակու. 4 օր չը կայ որ 3 թուրքեր հրապարակապէս սպանված են. ինչպէս պատմում են նամակագրական դատարանում հարկաւոր այդպիսի մարդասպանութեան գործեր կան թափված: Զատիկը յետոյ քանի մարդասպանութիւն է պատահել, ինչ ասես չէ սպասվում անկողնութիւնից, գողութիւն, մարդասպանութիւն անկարգութիւն և այլն միշտ պատահում է թուրքերից, որտեղ որ կան թուրքեր չը նայելով որ նրանք կազմէին ազգաբանակութեան փոքր մասը, սակայն միշտ այնտեղի բանտերը լցված կը տեսնես 3/4 մասը թուրքերով:

Մաքրագանի խմբից տիկին ֆառանձեմ երրորդ անգամն է, որ սիրողներին մասնակցութեամբ իր օգտին մի ներկայացում տալու համար աֆիշաներ է դուրս տալիս, ամեն անգամ էլ արգելքներ է պատահում, վերջին անգամ որ պիտի տային, ՀԱՐԱՅ դեղինիկ, դարձեալ յետաձգելիցաւ միայն աւանց նախապէս կիսաթափչաներ դուրս բերելու արդիւնքն որ շատերը գնացած և յետ դառած էին:

Չէր թողնակից պ. Աղէքսանդր Աբելեանի մի գործը արդարեւ գովելի է. նա այստեղ բազան անվատելով ձեռք է բերել բազան ընթերցանութեան յարմար զբեր, ստանալով նաև ՀՄՅԱՅի մի օրինակ. հասարակ գործարար մշակ դա-

սակարդի համար, որոնք հարկերնրով կան գործարաններում, որոնց մէջի մէջ և ինքը Աբելեանն է (բայց ոչ թէ իր հասարակ մշակ), նա տալիս է նրանց այդ զբերը կարգաւոր, իրենց ազատ ժամանակ, որ բազան ուրախութեամբ ընդունում են. այդ զբերը բոլորովին համապատասխան են նրա ձեռնարկին, լինելով գիտաւորապէս վէպեր, պատմութիւններ և «Նաճիտ» պէս ժողովրդական բանաստեղծութիւններ. դրանով Աբելեանը 3 գործ է անում. առաջին նա այդպիսով միջոց է տալիս նա գործավարին պարտաւել ընթերցանութեամբ, մինչդեռ այդ վերջիններով չեն պարագում, ինչպէս թողնակիցով և այլն, որոնք կարող էին նրանց մնասակար լինել: Երրորդ նա այդպիսով այդ հասարակ դասի մէջ տարածում է աշխատասիրութիւն, և հայրենիքի սէր: Ուրեմն ցանկալի էր մեր միւս լրագրողներից էլ, մանաւանդ մի համար ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆի թերթից: Նուիրատու պարոններ չը ինչպէս ինչպէս էլ չեն ատում, որ իրենք խմբագրութիւնը ուղղակիին, շատ մնաս չէր լինի, եթէ դանազան վէպերի, ժողովրդական բանաստեղծութիւնների հրատարակչներն մի մի օրինակ իրենց հրատարակութիւնից ուղղակին այդ նպատակով պ. Աղէք. Աբելեանի անունով Բազուկ:

Թող ենք տալիս մեզ և մի համեստ խորհուրդ առաջարկելու պ. Աբելեանին. այդ է հաւաքել գործարաններին այն դասակարգից, որոնք կարգաւոր չը գիտեն, կամ նոյն իսկ միւսներից կիրակի օրերով մի առանձին տեղ և ինչպէս ինքն է օտուտ, նրանց մէջ դանազան գործարան հարցերի վրա զբոյց անել: Կա ակել ազդեցութիւն կունենայ նրանց վրա:

Աբել Ապրելեանց

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՍՏԱԿ ԱՐՏԱՔԱՒՈՒՆ

Ապրիլի 22-ին

Վերջին ժամանակներուն կենդանի խօսքի պահանջը սկսում է ակել և ակելի զգալի լինել մեր մէջ:

Ազգային լրագրութիւնը, իր կարողութեան չափ, ձգտում է ժողովրդի մէջ տարածել լուրջ գաղափարներ, աշխատում է ժողովրդին ուղղել լուսաւորութեան և բարձրակրթութեան շարժումը ընթանալու Բարձր գնահատելով ազգային լրագրների ազդէն մատուցած ծառայութիւնները, մի և նոյն ժամանակ հարկաւոր եմ համարում նկատել, որ լրագիրը իր կրթիչ ազդեցութեամբ, գործողութեամբ դեռ այնքան տարածված չէ, որ հասարակութեան բոլոր դասակարգերի մէջ նորա ընթերցանութիւնը ընդհանրացած լինէր հասաստապէս և այդ պատճառով կարծում եմ որ լրագրութեան արդիւնքն առաւել ևս պարզապէս և արդիւնաւոր կարող էր լինել, եթէ եկեղեցին էլ իր կողմից աջակցէր այդ օգտակար գործին և կրթված ու բանիմաց քարոզիչ քահանաների միջոցով ձգտէր ժողովրդի բարոյականութեան ստոր մակերևոյթը բարձրացնել, աշխատէր ցրվել տեղիկով և տեղիկով ընդհանրացնէր, որ կուտակվել է ժողովրդի հասկացողութեան հորիզոնի վրա: Պէտք է նկատած, որ մեր եկեղեցուն մէջ—ինչպէս օտարազգի եկեղեցիներում—առանձին մասնազգէտ քարոզչներ չը կան և այդ իսկ պատճա-

ՆԵՐԳԻՆ ԼՈՒՐԵՐ

Շարաթ, մայիսի 8-ին, Արժուոտ թատրոնում յօդուտ ուսուցչական ժողովին պ. Երիցեան կը շարունակի իր առաջին դասախօսութիւնը, իսկ պ. Յարոյ դասախօսութիւն կը կարգայ Հաստատանի նայ գործերական մասնով մասին:

Շնորհակալութեամբ ստացանք պ. Աւետիք Տեր-Յակոբեանից նրա յօրինած քարտէշը նախկին Հայաստանի, որ կարգված է եւրօպական հեղինակների աշխատասիրած քարտէշերից: Քարտէշը գինն է 25 կօպէկ. վաճառվում է Կենտրոնական և Կովկասեան գրավաճառանոցներում:

Պարոն Կորիճէի կօնցերաբ, որ պէտք է լինէր Արժուոտ թատրոնում շարաթ օր, մայիսի 8-ին, լինելու է նոյն թատրոնում կիրակի օր, մայիսի 9-ին Տոմարիները կարելի է ստանալ Արժուոտ թատրոնի կասայում:

Մայիսի 4-ին, Երեքշաբթի օր, տեղի ունեցաւ Արժուոտ թատրոնում երկրորդ դասախօսութիւն յօդուտ ընդհանուր հայոց ուսուցչական ժողովին: Պ. Ա. Բահաթրեանց կարգայ «Դաշակոյցի և նրա նշանակութեան» վրա և բժիշկ Կ. Մէլքե-Ֆելաբեանց «Վարակիչ հիւանդութիւնների» վրա: Հասարակութիւնը իր ջերմ ծափահարութիւններով ցոյց տուց իր գոհունակութիւնը պ. պ. դասախօսողներին:

ԻԳԻԻԻՑ մեզ գրում են, ապրիլի վերջին օրերից թէ կարմրակ ցաւը այդտեղ այն աստիճան է տարածվել, որ ամենայն օր մի կամ երկու երկախայ է տեսնուած:

Նոյն տեղից դանդաղում են որ երկուս քաղաքները շատ անձիւղ են ուսուցչիներին ուժեղ տալու մէջ: Ռոճիկը շատ անգամ երկու ամսով են ուշացնում:

Լրագիրները հազորդում են որ կոմս Լօրիս Մէլքով վերադառնալով արաստանից Ռու-

սաստան, բնակվելու է մինչև աշունը Անապայի մօտ գտնված իր կալուածքում: Անապա քաղաքի բնակիչները դիտարկութիւն ունեն կոմսին առաջարկել իրանց քաղաքի պատուաւոր քաղաքացու տիտղոսը:

Մայիսի 4-ին Մայրանի ս. Գեորգի եկեղեցու դպիթը հաւաքվեց ամբողջ աւազ քահանայ Թեմաբղեանցի թաղման հանդէսին ներկայ գաղնվելու համար: Հանդուցեալը համար գերեզման էր փորված եկեղեցու դպիթում: Ժողովրդի միջից ձայներ լսվեցան թէ ինչի Ս. Գեորգի եկեղեցու հանդուցեալ քահանային այդքան փառքով և եկեղեցու դպիթում պէտք է թաղեն, կըր նոյն եկեղեցու քահանաները այդքան անսիրտ դատակցան մի քանի օր առաջ դէպի եօթ հողի մշակները, որոնք սպանվեցան Կարախանայում փուլ եկած շինութեան տակ, և թողնելով դիակները ամբողջ զիջելը անձրևի տակ, չուղեցին էլ ննջեցաների վրա քրիստոնեական թաղման կարգը կատարելու: Եթէ մշակները թաղվեցան խօջովանքում, ասում էր ժողովուրդը, և ս. Գեորգի եկեղեցու ոչ մի քահանայ չը համաձայնեց թաղել նրանց, թող ուրեմն քահանան էլ չը թաղվի եկեղեցու դպիթում, այլ Հաւաքարի խօջովանքի գերեզմանոցում: Հեռազրկցին Լլծմիածին և այնտեղից պատասխան եկաւ, որով արգելվում էր թաղել հանդուցեալ քահանային ս. Գեորգ եկեղեցու դպիթում: Հանդուցեալին տարան խօջովանքի գերեզմանոցի մէջ թաղելու:

Երէկ, մայիսի 5-ին առաւօտեան 7 ժամից սկսած, մինչև մտասորային 12 ժամը շարունակվում էր արեգակի խաւարում: Բայց մեղմունք, Թիֆլիսում, տեսանելի էր միայն արեգակի մասնաւոր խաւարում, իսկ կատարել խաւարումն տեսանելի եղաւ Հնդկաստանում, Չինաստանում և Աֆրիկայում:

ՆՈՐ-ԲԱՅԱՅԻՏԻՑ մեզ գրում են, որ ապրիլի 4-ին եղաւ այդտեղ բարեկարգական նպատակով

զեր ծախսել (ինչպէս այդ անում են մեր լրագրողները խմբագիրները) այդ հայերի համար մի անհասկանալի հանելուկ է:

Այդ մարդկանց տեսակետով խրաքանչիւր միջոց,—լինէր նա մինչև անգամ ամենաստոր—նեղրեկ է, եթէ գործ է դրված փող դադելու նպատակով, մինի վարկը կտարեցէք, միւսին մատնեցէք, կըրողի փողըը ջուր դարձրէք, այդ ներքին է, բայց ընտարաւել այս կամ այն անձնաւորութիւնը, մտարկել ժողովրդի պակասութիւնները և դորանով շատերին թշնամացնել, ասանց ու է սեպական նիւթական շահ ունենալու, այդ նրանց կարծեմով ինկապարտութիւն է:

Այսպիսի մի հասարակութեան, այսպիսի չըբաւ պատող հանգամանքների մէջ եւանդ պահպանելու, իրաքանչիւր հասարակական երևոյթ անաշատութեամբ ընտարաւելու համար, հարկաւոր է ունենալ տիկուն և հաստատահին բնաւորութիւն: Նա այդ պայմաններին համապատասխանում է հայր Կեմիլըճողեանցը: Նա մի մեծ արժանաւորութիւն էլ ունի, այն է քարոզելիս չփոփոխվում չէ և ոչ կմիմայնում, իր միտքը յայտնում է պարզ կերպով ու այնպէս ուղեւորված, որ նրա խօսքերը իսկոյն թափանցում են լսողի սրտի խորքը:

Կեմ պատի կիրակիները մի քանիտում, բնաւ սովորութեան, հայր Կեմիլըճողեանցը քարոզեց, որով ազատեց մեզ մի քանի անհոնոր քահանաներին լսելուց: Թէ մինչև իր աստիճան ազատ քարոզիչներ ունենք, կարելի է երկարեցնել նրանից, որ անցեալները մի քահանայ թողարկելու րանք քարոզել թէ բոլոր ազգասիրող, կարօտեալները, ամբարիշտները որդիներ են, որոնք տանջվում են իրեն թէ իրանց ծնողաց մեղքի փոխա-

հայ թատրոնային շնորհապատումն: Կերպարաց-
ման դուռ արդիւնքի որքանութիւնը յայտնի է:

Յիշեցնում ենք թիֆլիսի հասարակութեանը, որ
վաղը, մայիսի 7-ին, ուրբաթ օր, լինելու է Արծ-
րունու թատրոնում օրերորդ Մասինիի և պ.
Մխարի կօնցերը: Կօնցերի պրօգրամը շատ
գեղեցիկ է և կարող է մեծ գուարճութիւն պատ-
ճառել երաժշտութիւն սիրողներին:

Մենք խնայանք որ պ. Ալեքսանդր Մելք-Հայ-
կազեան, Փօթիկից, տեղեկացրել է որ պատրաստ
է տպագրել իր հաշուով պ. Արսէն Թօխմախանի
գասարանութիւնները:

Մեկ խնդրում են տպել հետեւալը: Ապրիլի
26-ին վախճանվեցաւ թիֆլիսում կարճատե հի-
ւանդութեանից յետոյ, Վահան Վահանեանց, որ
քնիկ Տրապիզոնցի էր: Հանդուցեալը 54 տարե-
կան մարդ էր և թողեց իրանից յետոյ մի ըն-
տանիք: Առուստրով պարագելոյի հանգուցեալը
իւր կարողութեան չափ, միշտ նպատակ էր թէ
նիւթագործ և թէ բարոյագէտ ամեն ազգային
գործին: Մի տարի առաջ իր հանգուցեալ մօր յի-
շատակին նա նուիրեց 25 օսմանեան լիրա Տրա-
պիզոնի ազգային ուսումնարանին, այժմ էլ
մասնաւոր թողեց իր յիշատակի համար կրկին
նոյն դպրոցի օգտին 50 օսմանեան լիրա, որ
ընդամենը կազմում է մօտաւորապէս 700 ռուբլ.
մեր թղթադրամով:

«Արձագանք» շարժականութիւնը քննիչի պաշտօնը
կատարելով, դուռ թէ մայրաքաղաքի ուսու «Գօ-
լոս» լրագրի նշանաւոր աշխատակից պ. Մօզէս-
տով հանգուցեալ Վասիլիշիլովի վրա իր յօդուած-
քը գրելու ժամանակ բառ առ բառ վերցրել էր
կտորներ «Միջուկ Հայաստանի» լրագրու աշխա-
տակից Սպանդար Սպանդարեանի յօդուածից, որ
սա գրել էր հանգուցեալ Այվազովիի արքեպիս-
կոսոսի մասին: Այդ տեսակ վարմունք, ի հարկէ,
սպասելի չէր «Գօլոս» աշխարհահայկ լրագրից:
Նոյն շարժականութիւնը իր մի այլ յօդուածում
ցոյց է տալով թէ ինչպէս «Մեղուն» էլ հայնո-
յանք չը թողեց որ չը թափէր հանգուցեալ
Վաքարիի արքեպիսկոսոսի գլխին, նրա կենդա-
նութեան ժամանակ, իսկ այժմ փառաբանում է
նրա յիշատակը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԿԻԱ

Թիւրքիայի մէջ պատերազմական մինիս-
տրութիւնը ամենամեծ ուշադրութիւն է

րէն: Պէտք էր տեսնել թէ ինչ անբաւականութիւն
առաջացրեց ժողովրդի մէջ այդպիսի մի տխմար
միտք, որ մինչև անգամ ժողովուրդը այդ մի
հայնոյութիւն սեպկուլի մի բանիւր բարձրածայն
յայտնեցին իրանց անբաւականութիւնը: Բայց լը-
սենք ինչ է ստույգ մի քանի օրից ետքը նոյն ա-
ռարկայի վերաբերութեամբ, հայր Կէմալը յայտնե-
ցը: «Պարոններ, Քրիստոսը ծնվեցաւ ոչ աշխար-
հային փառքով չը շարժաւորով, նա ծնվեցաւ աղ-
քատ ծնողներով, նա վարեց աղքատ կեանք, նա
փորձեց բոլոր թշուառութիւնները և դրանով նա
սրբազորեց թշուառութիւնը, ուրեմն չը պէտք
է աղքատներին խորհել, այլ խղճանք նրանց
վրա և օգնելը որքան կարող ենք»:

Մի այլ անգամ, տէր հայրը իր քարոզին նիւթ
էր վերցրել հայի օտարամոլութիւնը: Այդ ակա-
տը ինչպէս յայտնի է, հայ բնատրուծեան վատ
յատկանիշներից մինն է: Հայը հլու ստրուկ կա-
րող է լինել օտարին, ամենայն հաւատարմու-
թեամբ ծառայել օտարի շահերին, զոհելով դո-
ւանց համար իր մտաւոր և ֆիզիքական ոյժերը և
մինչև անգամ կեանքը:

«Մեր հայը—ասեց քարոզիչը—օտարի առաջ
օձի պէս սողալ, նրա հողաթափանքի հողը լիզել
գիտէ, նա օտարի շահերը պահպանելու համար
ամենայն ինչ զոհում է, իսկ մեր ազգային և
հասարակական շահերը բոլորովն անտես է առ-
նում, ահա այդպէս ենք մենք դուրսը: Իսկ մեր
տան մէջ, մեր հասարակական կեանքի մէջ, մեր
բոլոր ձգտումը ոչ թէ կայանում է միմեանց օգնելու
և համեմատելութեամբ գործելու, այլ մեր բաղձանքն
է քանդել մեր ընկերի, մեր եղբոր տունը և նո-
րա փլատակի վրա մեր սեպակալը հիմնել...
Եթէ—չարեանակեց հայր քարոզիչը—մեր մէջ եր-

բարձրել խնայողութեան վրա, գրում է Կ.
Պօսից «ΓΟΛΟΣ» լրագրի թղթակիցը: Օֆի-
ցերներն ծառայութեան ժամանակամիջոցը
աստիճան ստանալու համար երկարացրած է
և բայց այդ փոքրացրած է նրանց առանց
այդ էլ աննշան ուժիկը: Այդ պատճառով
Օսմանական շաքարի դժգոհ են գրել թէ
բոլոր թիւրք օֆիցերները: Ի միջի այլոց
պէտք է նկատել, որ վերջին ժամանակնե-
րում թիւրքաց կառավարութիւնը մեծ խնա-
տողութիւն է անում, աչքի առաջ ունենա-
լով Ռուսաստանին վճարելի պատերազմական
ծախսերը: Ասում են, որ սուլթանը այդ
հարցը սկզբունքով բաւականացրեց իր
պով է վճարել և հրամայել է պալատական
ծախսերը փոքրացնել: Որքանի, նա հրամա-
յեց մինչև նոր կարգադրութիւնը դադար-
եցնել այն ընծաները, որ իւրաքանչիւր
շաբաթ տրվում էին սուլթանի կանանց:
Այդ առիթով վերջինները վճարել են բողբոջ
և մինչև այժմ ամեն օր յայտնում են իրանց
անբաւականութիւնը սուլթանին:

Խնայողութիւնը մինչ այն աստիճան է
հասցրած, որ ծառայութեան ժամանակա-
միջոցը լրացրած և հայրենիքը գնացող զին-
ւորներին այլ ևս չեն ուղեկցում թիւրք
օֆիցերները: Գրա հետևանքը բազմաթիւ
անկարգութիւններ են, որոնց վրա գան-
գաններ են տալիս, բայց նրանք անուշա-
գիւր են մնում:

ԻՏԱԼԻԱ

Հռօմից «Polit. Corresp.» լրագրին ապ-
րիլի 25-ից գրում են հետեւալը: Փարիզի
խտալական դեսպանը նշանակելու համար
թէպէտ իտալական կառավարութիւնը վերջ-
նական որոշումն չէ կայացրել, բայց, ինչպէս
երևում է, այդ պաշտօնը վարելու համար
կազմակերպել են Վ. Պետերբուրգից քարիզ
ընդունելով: Արդի հետև գանազան տե-
ղերից հաւատարմութիւն էին, թէ քարիզում
դժգոհութեամբ կընդունէին Նիդրլանդացի դես-
պան նշանակելը նրա ունեցած նախկին յա-
րաբերութիւնները պատճառով Նապօլէօնի
կառավարութեան հետ, կարելի է հաստա-
տագէտ ասել, որ Ֆրանսիական կառավար-

ութեան պէս սակաւթիւ ազգային գործիչներ երե-
ւան են գալիս, որոնք անձնուիրաբար, առանց ո և
է ակնկալութեան սկսում են գործել հասարակաց
օգտի համար, այդպիսիներին մենք ոչ միայն չենք
գնահատում, ոչ միայն գտնել լոկ պատտանական
համակարգութեամբ չենք քայքայելու, այլ ընդհա-
կառաւոր նախանձից կուրացած, դանազան կեղ-
ատա միջոցներով, մասնութիւններով, սև զըր-
պարտութիւններով աշխատում ենք այդպիսիներ-
ին ստպալել և միայն այն ժամանակն ենք
հանդատում, երբ մեր չար նպատակին հասած
ենք լինում: Կայ մի տեսակ ազնու նախանձ, դա
բարի նախանձն է, որով մարդիկ աշխատում են
նրանովը, հասնել այն բարձրութեանը, որին ու-
րիշները ով գիտէ ինչ գտնաբերութիւններով կա-
րողացել են հասնել: Բայց հայիցը այդ նախան-
ձիցը չէ, նորանք սև նախանձն է, որի համա-
ձայն մի որ և է հայի մի արժանաւորութեան կամ
պատուի և աստիճանի արժանանալը նրա աչքին
փուշ է դառնում և հայը չէ աշխատում այն
բարձրութեանը միայն հասնելու, որի վրա իր ա-
տելուն կանգնած է, այլ նրա բաղձանքն է իր ա-
տելուն վայր բերել բարձրութիւնից և գրաւել
նրա տեղը:

«Վերանցից—ասեց նա—կազմվում է հասարա-
կութիւնը, իսկ այս վերջինից ընդհանուր մարդ-
կութիւնը: Ի նկատի ունենալով այդ հանգաման-
քը, ընտանիքի վրա մի նշանաւոր պատասխա-
նատվութիւն կայ, որ նրա միջից թէ հասարա-
կութեան և թէ մարդկութեան միասակար ան-
դամներ դուրս չը գան»:

Այնուհետև ինչեցնելով այն պարտաւորութիւն-
ները, որ ընտանիքի անդամներից իւրաքանչիւրը
ունի միւս անդամների վերաբերութեամբ, քարո-
զիչը ասեց՝

«Մեր մէջ կան այնպիսի ընտանիքի հայրեր,
որոնք առանց խղճահարութեան, իրանց օրերը
անցնում են զեղխութեան, արբեցողութեան մէջ,
այն ինչ տանը, նրանց կինը և զաւակները քաղ-
ցած են: Այդպիսիներին ես կը նկատեմ, որ այն
ժամանակից երբ նորա կին և զաւակներ ու-
նեն, նոյն սեպակալութիւնը միայն իրանցը չէ,
այլ պատկանում է ընդհանուրին. ծախսել կամա-
յականութեամբ այդ փողերը, նշանակում է գո-
ղանալ ընտանիքի սեպակալութիւնը և իւրա-
քանչիւր ընտանիքի անգամ պէտք է զգուշանայ
այդպիսի յափշտակութիւն անելուց»:

Անցեալ կիրակի օրը, ամսին 18-ին, հայր Կէ-
մալը ծղղկանց քարոզեց նոր սերունդի վերաբե-
րութեամբ:
Բացատրելով սկզբից, որ այնպիսի հզօր պե-

րութիւնը ոչ թէ միայն արգելք չի դնի, որ
Նիդրա իտալական դեսպան նշանակվի Փա-
րիզի մէջ, այլ և հարկաւոր համարեց յայտ-
նել, թէ նրան դեսպան նշանակելը կառա-
վարութիւնը ուրախութեամբ կընդունի: Ե-
թէ մինչև անգամ բօնապարտեան կուսակ-
ցութիւնը այնքան լծոյլ չը լինէր, որքան
այժմ, այնու ամենայնիւ Նիդրայի անձնա-
կան բնաւորութիւնը մի գրաւական է, որ
նա կարգադրանքի նրան ցոյց տուած հաւա-
տարմութիւնը և երբէք ինտրիգներ չի անի
այժմեան կառավարութեան դէմ: Ինչ կը
վերաբերի իտալական կառավարութեանը,
նա, ճանաչելով Նիդրայի խելքը և բարձր
ընդունակութիւնները ուրախութեամբ կը
յանձնի նրան իտալական դեսպանի դժուար
պաշտօնը փարիզի մէջ: Մնում է ուրեմն
իմանալ թէ արդեօք կը համաձայնվի ար-
դեօք նա տեղափոխվել Վ. Պետերբուրգից,
որտեղ նա կատարելագէտ գնահատված է
և մեծ ազդեցութիւն ունի: Նիդրա պաշ-
տանագէտ դեսպան կը նշանակվի միայն այն
ժամանակ, երբ առեւտրական դաշնագիրը
խտալայի և Ֆրանսիայի մէջ վերջնակա-
նագէտ կը հաստատվի:

Հռօմից նոյն լրագրին ապրիլի 29-ից հա-
ղորդում են: Արտաքին գործերի մինիստր
Մանչիլիի իտալական պատգամաւորների ժո-
ղովին շուտով մի օրինակից կը ներկայաց-
նէ, որի համաձայն կը յայտնվի Նապոլիի
բարձրագոյն իրաւունքները նորերումն ձեռք
բերած Աստաբի ծոցի վրա: Աստաբի ազատ
նաւահանգիստ կը դառնայ և առանձին
վարչութիւն կունենայ: Այնտեղ դադրել
ցանկացող իտալացիներին կապահովվի կա-
ռավարութեան կատարել պաշտպանու-
թիւնը, որ կը տարածվի նոյնպէս և տե-
ղացի ցեղերի վրա, որոնց հետ առանձին
դաշնագրեր կը կապվեն: Աստաբի Նա-
պոլի համար մի կէտ է, որտեղից նա կա-
րող է առեւտրական յարաբերութիւններ կա-
պել Արիւնիայի և Միջին Աֆրիկայի հետ:
Այսուհետև Հնդկաստան ուղեւորվող իտա-
լական նաւերը կարող են խարխիւ գցել
իտալական մի լաւ նաւահանգիստի մէջ և
ոչ թէ Արեւելի մէջ, որտեղ խարխիւ գցելու

իր Ստեղծողը, դէպի իր ազդութիւնը, որոնց յի-
շուր երկար տեղ կը բռնէր, քարոզիչը անցաւ
ընտանիքին, բացատրեց որ իւրաքանչիւր ընտա-
նիք առանձնապէս վերցրած մի փոքրիկ աշխար-
հիկ է, որի մէջ, նրա անգամները ծնվում, սրն-
վում և պատրաստվում են հասարակութեան ան-
դամ լինելու:

«Վերանցից—ասեց նա—կազմվում է հասարա-
կութիւնը, իսկ այս վերջինից ընդհանուր մարդ-
կութիւնը: Ի նկատի ունենալով այդ հանգաման-
քը, ընտանիքի վրա մի նշանաւոր պատասխա-
նատվութիւն կայ, որ նրա միջից թէ հասարա-
կութեան և թէ մարդկութեան միասակար ան-
դամներ դուրս չը գան»:

Այնուհետև ինչեցնելով այն պարտաւորութիւն-
ները, որ ընտանիքի անդամներից իւրաքանչիւրը
ունի միւս անդամների վերաբերութեամբ, քարո-
զիչը ասեց՝

«Մեր մէջ կան այնպիսի ընտանիքի հայրեր,
որոնք առանց խղճահարութեան, իրանց օրերը
անցնում են զեղխութեան, արբեցողութեան մէջ,
այն ինչ տանը, նրանց կինը և զաւակները քաղ-
ցած են: Այդպիսիներին ես կը նկատեմ, որ այն
ժամանակից երբ նորա կին և զաւակներ ու-
նեն, նոյն սեպակալութիւնը միայն իրանցը չէ,
այլ պատկանում է ընդհանուրին. ծախսել կամա-
յականութեամբ այդ փողերը, նշանակում է գո-
ղանալ ընտանիքի սեպակալութիւնը և իւրա-
քանչիւր ընտանիքի անգամ պէտք է զգուշանայ
այդպիսի յափշտակութիւն անելուց»:

Անցեալ կիրակի օրը, ամսին 18-ին, հայր Կէ-
մալը ծղղկանց քարոզեց նոր սերունդի վերաբե-
րութեամբ:
Բացատրելով սկզբից, որ այնպիսի հզօր պե-

համար սուրբը չափազանց բարձր է: Որ-
քան էլ սկզբից աննշան է երևում Աստաբի
ձեռք բերելը, նա կարող է Նապոլիի ա-
պագայ առևտրի համար ահազին նշանա-
կութիւն ունենալ:

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Աթէնքից «Polit. Corresp.» լրագրին
գրում են ապրիլի 25-ից: Յունաստանի մէջ
տիրապետող պարլամենտական կուսակցու-
թիւնը վաղուց պատրաստում էր պախարա-
կուն յայտնել կուսակցութեան մինիստրու-
թեանը և վերջապէս այդ ցանկութիւնը
ապրիլի 24-ին իրագործվեցաւ: Յունական
պատգամաւորները ջատկի երկար արձա-
կորդներից յետոյ վերջապէս մեծ թւով
հաւաքվեցան Վճիւ կայացրելու համար:
Մինիստր նախագահ Տրիկուպիս ամենից
առաջ մի քանի նշանաւոր օրինակներ
առաջարկեց ժողովին, որոնք վերաբերվում
են աստիճանաւորների ծառայութիւն մրտ-
նելուն, զօրքերի նոր կազմակերպութեանը,
գերմանիայի հետ առևտրական նոր դաշ-
նագիր կապելուն և մի քանի այլ առարկա-
ներին: Այսուհետև Վ. օլօի պատգամաւորը
առաջարկեց պախարակուն յայտնել կու-
սակցութեան մինիստրութեանը: կուսակցու-
րոս գանգատից, թէ նա պահանջեց ներ-
կայացնել ժողովին այն զօլուսները,
որոնք նկարագրում են յունական զօրքերի
և նաւատորմի դրութիւնը այն ժամանակ
էրը Յունաստանը պէտք է պատերազմ յայտ-
նէր թիւրքիային և չընդունէր Բերլինի դաշ-
նագրի որոշած սահմանը, բայց այդ զօլու-
սները յայտնի չեն պատգամաւորների
ժողովին: կուսակցութեան յայտնեց, որ նա
չի մասնակցի իր դէմ ուղղած վիճարանու-
թիւններին մինչև մինիստրութիւնը չը ներ-
կայացնէ վերջինից զօլուսները: Այդ
յայտնութիւնը չարքեղեց պատգամաւորների
ժողովին շարունակել հարցի քննութիւնը
և, չը նայելով, որ կուսակցութեան կուսակ-
ցութիւնը չը մասնակցեց վիճարանութիւն-
ներին, ժողովը ընդունեց պատգամաւոր
Գրագուսի հետեւալ բովանդակութեան

տութիւններ ինչպէս ինչ Հռօմեաները և ինչ
Յունաստանը լուծվեցան, քայքայվեցան այն
պատճառով, որ անբարոյականութիւնը, պճատի-
րութիւնը և շուտութիւնը մուտք էին գործել
ընտանիքի մէջ, խախտել էին դրա հիմքը և դո-
ւանից վարակիչ ախտը ընդհանրացել և մաշել էր
պետական օրգանիզմը:

«Այդ տեսակ մի երևոյթ է նկատում եմ այս-
տեղ—ասեց քարոզիչը:—Բարք ու վարքի ապակա-
նութիւնը, շուտութիւնը, մտել են մեր մէջ սո-
րանից 20—25 տարի առաջ:
«Հին նախակուսական պարզութիւնը, ծերերին
յարգելը, նրանց փորձառու խրատներին լսելը
այլ են գոյութիւն չունեն. դրանք տեղի են տակ
մի ինչ որ կըրծ լուսաւորութեան, լուսաւոր-
ութեան որ ոչինչ հեղինակութիւն չէ ճանաչում,
որ չըբըսմ է ընտանիքը, ծաղրում է կրօնը և
եկեղեցին մի այնպիսի կերպով, որ կարծես զօր-
արդէն բնութիւնը իր ամբողջութեան մէջ բոլոր-
ովին քննադատել և հասել են մի այդպիսի վերջ-
նական եղբակցութեան: Այնպիսի խնդիրներ
որոնց վերաբերութեամբ ամենանշանաւոր բնա-
գէտները անգամ մեծ զգուշութեամբ իրանց կար-
ծիքը յայտնում են, մեր երիտասարդները առանց
երկախ ու բարակ մտածելու վճռահատում են խ-
կայն: Կա առաջ է գալիս լուսաւորութեան բա-
ցակայութիւնից. ճշմարիտ լուսաւորութիւնը այդ
պիսի յիմարութիւնները չէ թողարտում:

«Մեր երիտասարդ սերունդը գնալով թիֆլիս
առևտրի, ոչ այնքան ապրանքներ է գնել, որ-
քան անբարոյականութիւն, ապականութիւն կամ
գանազան վարակիչ ախտեր է սեփականացրել,
որոնք նա իրեն մի նուրբ փոխադրել է իր մայրենի
քաղաքը: Այդ երիտասարդ սերունդը փայլել է

քան անբարոյականութիւն, ապականութիւն կամ
գանազան վարակիչ ախտեր է սեփականացրել,
որոնք նա իրեն մի նուրբ փոխադրել է իր մայրենի
քաղաքը: Այդ երիտասարդ սերունդը փայլել է

խմբագրութիւնը. «Պատգամաւորներ ժողովրդը, նրա մէջ կատարված վիճարանութիւնները յետոյ հրաժարված մինիստրութեան գործողութիւններ մասին յայն-ժիւրքական սահմանների ազդեցիկ խնդրի վերաբերութեամբ, պահարկում է նրա քաղաքականութիւնը իբրև փաստակար Յունաստանի համար, որովհետև մինիստրութիւնը խախտեց իր առած խոստումները պատգամաւորների ժողովին և չը կատարեց իր սահմանադրական պարտականութիւնները:» Ընդգրկմանը կուսակցութիւնը բողոքեց այդ հարցի քուէարկութեան դէմ, որ կատարվեցաւ տեղերից վերահսակով և պահանջեց անուանակոչ քուէարկութիւն: Այդ պահանջը ժողովը անուշադիր թողեց: Ինչպէս յայտնի է անցեալ տարի պատգամաւորների ժողովը պահարկումն յայտնեց Տրիկուպիան գործերին ինքնակամ կազմակերպելու համար: Բայց այն պահարկումը, որին ենթարկվեցաւ Վոմոնուրոս, աւելի խիստ է: Այնու ամենայնիւ յունական լրագիրները մեծամասնութիւնը պատգամաւորների ժողովը վճիռը վրէժխնդրութեան հետևանք է անուանում, որ գործնական ջղոճութիւն չէ խոստանում: Լրագիրները նկատում են, որ Տրիկուպիան էլ վերջ է վերջոյ ստիպված կը լինէր հաշտվել Վոմոնուրոսի ստեղծած գրութեան հետ, եթէ նա չը վախենար պատգամաւորութեանը և չը դուռներ պատգամաւորների ժողովը: Վերջապէս ինչ կը վերաբերի Վոմոնուրոսին և նրա կուսակիցներին, որոնք այժմ կառավարութեանը ընդդիմացողներ են, նրանք ստիպված են հաշտվել իրանց գրութեան հետ: Վոմոնուրոսի կուսակիցները մի ժողով կայացրին և վճռեցին արհամարհանքով վերաբերվել պատգամաւորների ժողովի որոշմանը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Presse» լրագրին վարնայից հաղորդում են, որ ապրիլի 22-ին մի քանի հարկեր մասնատարաններ նաւեր նստեցին Փարիս-Ատիա գաղթելու համար: Այդ գաղթականութեան պատճառով Բարդաղի, Էսկի-Ջումի և Եոմայի շրջակաները թիֆլիսում իր ծայրայեղ անբարոյական և տղեղկոզմարով, մինչև այն աստիճան, որ թիֆլիսի հասարակութեան անբարոյական մասը՝ կինոսներն անզամ դարձան և նրանք ինչպէս կարելի է այդքան շատ և այդքան անբարոյական լինել: Վերաւեր քաղաքի մէջ մի որ և էլ չէ անբարոյական անձրն, որին փչելըը հաւաքած ման դալին տեսնելով, դուք ամենատրտալիկ մարդն էք կարծում, բայց դժուարութիւն կրեցէք այդ մի և նոյն անձին թիֆլիսում տեսնելու և դուք ձեր աչքերին չէք ուզում հաստատ, այնքան սաղեղուցիլ և ազդու է փոփոխութիւնը: Չէր օրինակելի մարդը ֆայետոնում ձգված այս անբարոյական տանից անց գինեւում բնակվող կամլիսները «ժիծոնակ» երգելու համար հարկւաւոր բուրլիներ է մեխում: Ինչ է ներկայացնում այժման սերունդը համայնաբար անցեալ սերունդի հետ, ոչ այլ ինչ, եթէ ոչ նորա ստեղծը: Բարոյապէս և ֆիզիքապէս փոսած, անպարտուր և զեղի կեանքից մաշված, առան որ և է գործի մէջ տոկոսութիւն ցոյց տալու, իրան թարմ ոյծերը անբարոյական կեանքի մաս սպասած, ժամանակից առաջ ծերացած յիւմար և տժգոյն էակներ, ահա ձեզ մեր նոր սերունդը: Սորանցից իւրաքանչիւրը որքան վարակիչ անտարի է ենթարկվել մինչև իր ամուսնանալը, ինչպիսի սերունդ կարող է արտաբերել սորանցից, դժուար չէ գուշակել: Գուցա մի տեսակ հիւանդներ են և եթէ թիֆլիսի անուանեցիկը, այդ այն պատճառով էր, որ առողջ խելքը առողջ մարմնի մէջ կարող է միայն լինել:»

«Արշալուստի ահա հետզհետէ փայտում է սերունդը, վերականգնող, վարակիչ արտոբրից ամենասարսփելին, որ իր կործանիչ ազդեցութիւնը

զրկվեցան իրանց ազգայնակութեան մեծ մասից:»

—Times» լրագրին վիչնայից հեռագրում են ապրիլի 22-ից, որ սահմանադրական կուսակցութեան արկոյացիան, իշխան Ալեքսանդրի Սոֆիայից գնալուց յետոյ, նկատելի կերպով մեծացաւ, առում են, որ իշխան Ալեքսանդրի հրաժարվելը շատ հաւանական է, և որ Ալեքսանդրն է առաջարկում նրա տեղը: Բայց զրանից, առում են, որ իշխանութիւնը ձեռքում ունեցող կուսակցութիւնը, կառավարութեան աչքի առաջ պատգամաւորների շեղումը և սենսում դեպի Մակեդոնիան արշաւելու համար:

—Լրագիրները հաղորդում են, որ Նիշայում, Լէտովացում և Պոլսուպլում ապրող թիւրքերը օտար մեծ պետութիւնների արտաքին գործերի մինիստրներին հետևեալ աղբիւրագիր ուղարկեցին: «Չէր փրկապանութիւն: Ահա չորս տարի է արդէն, որ սերբերը արտաքինքին մեզ, մասնատարաններին, թուով 150,000, մեր բնակարաններին: Որովհետև Բերլինի դաշնագիրը և նրանից առաջ կայացած Նիշայի դաշնագիրը թիւրքերը սպառնալիցանում են մեր մասնատար սեփականութիւնը, ուրեմն դրանից հետո և է, որ Սերբիան ուշադրութիւն չէ դարձում դաշնագրի սկզբի վրա: Ահա չորս տարի է արդէն, որ մեր մասնակիցը ոչ հաց են տեսնում և ոչ լոյս, և այժմ այնպիսի գրութեան են հասել, որ պէտք է ստից մեռնեն, որովհետև Սերբիան իւրը մեզանց բոլոր մեր ունեցածը: Յանուն մարդկութեան ազատում ենք, ձեր գերազանցութիւն, մեզ ևս մարդ համարել, թէ պէտ է թիւրքեր ենք մենք: Այնք համոզված ենք, որ չէք թող տայ, որ մենք ստից և ցրտից մեռնենք, և գործ կը դնէք ձեր բոլոր ազդեցութիւնը սերբական կառավարութեանը հանդիմու համար վերադարձնել մեզ դաշնագրի հիման վրա, որը ձեռք գերազանցութիւն է ստորագրել, մեր կայքերը և վարձատրել մեզ մեր կրած վնասների փոխարէն:»

—«Rèpublique Française» լրագրին Գուրլիցից հեռագրում են, ապրիլի 22-ից, որ երէկ երեկոյան Նասասում 70 բանադրվածները խարոյկ վառեցին բանտի սրահում և Ֆորստերի պատկերը այրեցին ի պատիւ Պարնէլի ազգայնակով և անէճքեր թափելով Ֆորստերի դիւխին: Նրանք հեռացան միայն նահանգապետի սպանաւորից յետոյ, որ առում էր թէ դրոքեր կը կանչէ: Ֆորստերի պատկերը այրեցին նոյնպէս Նասասի հրապարակի վրա:

—«Post» լրագրին Լոնդոնից հեռագրում են, ապրիլի 22-ից, թէ բարձր շրջաններում կարծում են, որ օգոստոսին իրանիստի փոխարքայ Սլեյխեյի տեղ կը նշանակվի Կ. Պոլսի նախկին ղեկավար լորդ Գրիֆէլին:

Ժամանակաբար հասցնելու է մեր երգըը ու թողնելին, արդէն սկսում է աւելի և աւելի կրկնել: Պատասխանատուութիւնը, որ կայ այժման սերունդին վրա, ապագայ սերունդի վերաբերութեամբ շատ մեծ է, բայց մենք նշանակութիւն չենք տալիս դրան. մենք ապագայ սերունդին, նրա ծնելից առաջ սպանում ենք, մեր ձեռքերով նորա մահն ենք նիւթում, մենք ենք պատճառը որ նորանից դուրս են գալիս մի տեսակ դիւրեւոյի (Xpյու-կի) էակներ, որ անկարող են լինում տանել կեանքի խիստ պայմանները և վաղահաս դեղիմանն են մանում: Մտեցէք որ և է կրիտասարական խորակիլն և լսեցէք նորա խոսակցութիւնները, դուք կը լսեք ոչ թէ մի լուրջ դատողութիւն, ոչ թէ մի առողջ միտք, այլ նոյն անբարոյականութեանց, նոյն շատութեանց նկարագրիներ, խմած զինու. քանակութեան պատճառով պարծենալը. ահա մեր նոր սերունդի անգործ ժամանակվալ դուրսութիւնը:

«Այդ աղբիւս լինելուց յետոյ—ստեղ հայր Գլմիւրճողիանցը, ևս ընական եմ կարծում, որ մեր քաղաքացին իր աւետարական վարկը հետզհետէ կորցնում է: Ուրեմն անցան այն ժամանակները, երբ մի կրպակատեր, իր հարեան կրպակատիրով բացակայութեան միջոցին, հարեաւոր ժամանակ, նրա դրամարկից փող կտանէր և ետքը կը վերադարձնէր և ոչ չէր էլ մտածի որ և է անպանութիւն նկատել այդպիսի վարձուքի մէջ:»

«Ինչն է պատճառը, որ այժմ մեր մէջ գանգատում են աւետարական տեղ վիճակի վրա, ընդհանուր անխողութեան վրա, քանի որ այժմ մեր քաղաքի աւետարական շրջանները թիւրքերը 10—15 տարի առաջ կար, եթէ ոչ այն անհաւա-

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Իշխան Բիսմարկ և Գարլին: Մեծ բնադէտի և կայսերական կանցլեր իշխան Բիսմարկի մէջ, իհարկէ, մեծ զանազանութիւն կար, բայց նրանք էլ մէկ ընդհանուր նմանութիւն ունեին: Իշխան Բիսմարկին մահ, Գարլին, ազատ ժամերին, սիրում էր Ֆրանսիական բոմաններ կարգաւ, և պէտք է ասել, նա կարող էր ամենավատ բոմանները, ուր նրա կարողութեամբ էին ամենատարածելի անդրեր: Եստ հաւանական է, որ մեծ բնադէտը զուարճանում էր, տեսնելով թէ որքան ցած է ընկել արարածներից ամենաազդեցիկը—մարդը, որպէս իր կատարած յանցանքների, նոյնպէս և հեղինակների բարոյական մակերևութի կողմից, որոնք նկարագրում են մարդկութեան այդ կեզոտ կողմերը:

Գիտօն իր բանտարկութեան ժամանակ, մէկ գիրք հեղինակեց, որը այժմ տպվում է «The Truth and the Removal» (Ճշմարտութիւնը և նրա ջնջումը): Յառաջանի մէջ Գիտօն առում է. «Ես յօծարութեամբ կանցնում դէպի յաւիտեանական փառք յունիսին, քան թէ ամբողջ կեանքը մեծաբ ընտանում:» Նրա ըրողը, միտարիս Սկովիլի, յայտ ունի խոշոր գումար ստանալ այդ գրքի ծախվելուց, իսկ նրա ամուսինը, փաստաբան Սկովիլի, որ պաշտպանում էր Գիտօնին, երկրի մէջ ճանապարհորդութիւն է սկսում այդ դատի մասին դատաստութիւններ կարգաւոր համար: Ամերիկական մամուլը բարկութեամբ է խօսում յանցանորի ազդեցիկների այդպիսի գործողութիւնների դէմ, որոնք չեն խորշում նրա թակաս շահ տանալ այնպիսի արտոք հանցամարտից, որպէս նախագահի սպանութիւնն է: Երբ, որ Գիտօն ունէր այն ժամանակ երբ ատրճանակ արձակեց նախագահի վրա, նա ծախեց մէկ ցրիկի կառավարչի վրա 250 դոլարով:

Լոնդոնի լրագիրները հաղորդում են որ մայիսի 5-ին, Գարլինի թղթերում գտնվել են իր սեփական ձեռքով գրած կենսագրութիւնը և իր հօր կեանքի պատկերը:

Փարիզում վախճանվեցաւ, ապրիլի 13-ին, 78 տարեկան հասակում Ֆրանսիական Ակադեմիայի անդամ, սենատոր կոմս Ֆրանց-դէ-Եսպանյու: Նա ծնվեցաւ Վիչնայում, 1804 թին, և Նապոլեոնիան մինիստրի կրկնող որդին էր: Բաժանակով Մոնտալամբէրի և Բէնիտի քաղաքական և կրօնական հանդիմունքները, կոմս Եսպանյու աշխատակցում էր «Ami de la Religion» և Correspondent» լրագիրներին: Նրա ամենամանրակշիւ դը-

րուածքը համարվում է «Կէսարների Պատմութիւնը», որ 1841 թինց մաս մաս տպվում էր «Revue des Deux Mondes» ամսագրում: Գրականու և Գիտօն շատ անգամ առաջարկում էին կոմս Եսպանյուին Ֆրանսիական Ակադեմիայի անդամ ընտրել: Ապրիլի 29-ին 1869 թին, Բէրլինի մահից յետոյ նա ընտրվեցաւ:

Օտարոտի կտակ. «Philadelphia Presse» լրագրին Պենսիլվանիայի նահանգի Լանկաստերից գրում են, որ նորերում վախճանված Տադեուս Ստեֆենս մէկ օտարոտի կտակ թողեց: «Եթէ իմ սիրելի ազգական Տադեուս Ստեֆենսը կրտսերը,—ասված է այդ հետաքրքիր կտակի մէջ,—5 տարվայ ընթացքում ժողովել կեանքը կը վարէ, այն ժամանակ նա կը ստանայ իմ մահից յետոյ մնացած կարողութեան մէկ յայտնի մաս. եթէ նա էլ չի հինգ տարի նոյնպիսի ժողովել կեանքը կը վարի, այն ժամանակ կը ստանայ նոյնպիսի մէկ մաս, իսկ եթէ 15 տարվայ ընթացքում խմիչք չի գործածի, այն ժամանակ կը ստանայ ամբողջ ժառանգութիւնը, ի բաց առնելով մի քանի անձանց դուռները, որ նշանակված են մի քանի անձանց: Եթէ ազգականը չի ընդունի այդ պայմանները, այն ժամանակ նա պէտք է իր ամբողջ կեանքում բաւականանայ տարեկան 800 դոլար օժանդակութեամբ: Երիտասարդ Տադեուս ընտրեց վերջին պայմանը, որովհետև սատակ սէր ունի դէպի խմիչքը: Վերջը, կտակի մէջ ասված է, որ եթէ ազգականը կը կամենայ միայն 800 դոլարով բաւականանալ, մնացած դուռնաբով պէտք է որբերի համար, որոնք մանկութիւնից ծնողներից զրկվում են, որքանոցներ հիմնել և ընդունել ամենքին առանց խտրութեան կրօնի և ազգութեան:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՑ

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻ, 4 մայիսի: Լրագիրները մայիսի 4-ից հաղորդում են, վճռված է գրահակիր նաւատորմ կառուցանել Սև ծովի վրա: Նախագծված է մի նոր մինիստրութիւն կամ գլխաւոր վարչութիւն, որտեղ կը կենտրոնացնուին գիւղացիների կազմակերպութեան վերաբերեալ բոլոր գործերը: Բուշի գործը սկսվեցաւ երէկ, կանչված են 135 վիսներ:

Խմբագիր—հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐՄԻՈՒՆԻ

Եթե մի քանի ժողովուրդը և այդ բարոյները մեծ ազաւորութիւն են թողնում ունեղիւրդների վրա. դրա ժողովուրդին առատ նիւթ են մատակարարում խորհելու և խօսելու, բայց որովհետև այս ազաւորութիւնը վաղանցով կառուց է լինել, վանորոյ տէր հայրը մտադրել է իրաւքանչիւր կիրակի քարոզել, հաստատուել համոզված լինելով, որ այն ակտեղը որոնք տարրների ընթացքում արմատացել են ժողովուրդի մէջ, մի օրուայ մէջ չեն կարող ունչացրած լինել. նա գիտէ որ մի տեղ, մի քարի վրա թափած թէև անպիտան քանակութեամբ ջուրը մի անգամից ոչինչ ազդեցութիւն չէ կարող տեսել, իսկ մի և նոյն ջուրը կաթիլ կաթիլ թափվելով, ամենակարգը քարն անգամ կարող է փոսացնել ծակել:

Այդ քարոզները, որ ճիշդ նկարագրին են կազմում մեր ժողովուրդի, կարծում եմ, որ կարող են ընթերցողը համար հետաքրքիր լինել, իբրև ոչ թէ միայն մեր քաղաքի ժողովուրդական ցուերի պատկերները, այլ հաստատուելու գիտնալով, որ մեզ չբռնապատող քաղաքների ժողովուրդներից շատերն էլ տանջվում են նոյն ցուելով: Այդ նկարագրի կարող է մի լոյս սփռել և գիւղական ժողովուրդը բարոյականութեան, նրա դարգացման վերաբերութեամբ, որովհետև մեր գաւառացին օրինակ է վերցնում թիֆլիսից, իսկ գիւղացին գաւառական քաղաքից և դժբաղդարար դրաւ, թողած լաւ կողմերը, միայն վատ կողմերի օրինակներն են վերցնում:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Лечебница Общества Покровитель-
ства животныхъ, Песковская улица
д. Гврити-швили. Приемъ больныхъ
съ 8 до 9 часовъ утра ежедневно,
за исключениемъ воскресныхъ, празд-
ничныхъ и табельныхъ дней.

Կենդանիների Հովանավորութեան Թիֆլիսի
Ընկերութեան բժշկանոցը գտնվում է Սադի
վրա, Պետկովայի փողոց, առև Գվրիտի-շվի-
լի: Ընդունելություն հիւանդ կենդանիների
ամեն օր, ժամը 8-ից մինչև 9 առաւօտեան,
բացի կիրակի և տօն օրերից:

2—10

ԲԱՅՅԻ

Գ Ա Ի Ի Թ Բ Է Կ

ԳԻՐԲ ԵՐՐՈՐԳ

Բաղկացած է 563 երեսներից

Գին է 2 ՐՈՒՐԸ

Օտարաբարարացիք ուղարկում են ձա-
նապարհածախը 15 և մարկաներով
առանձին գնորդները ձանապարհածախը
չեն վճարում: Տասնից աւելի գնորդնե-
րը 10% զիջում են ստանում:

«ЦЕНТРАЛЬНАЯ КНИЖНАЯ ТОР-
ГОВЛЯ»
Тифлисъ, Головинский проспектъ д. Ми-
риманова, №№ 3 и 4.

2—15

ՓԱՐԻԶԻՑ ԵՐ ԳԱՒՈՎ

Պատիւ ունեւ յայտնելու յարգելի Հա-
սարակութեան, որ եւ փարիզում երկար ժա-
մանակ լինելով սովորել եւ անվանա պահ-
պանել Թ Ա Ն Գ Ա Գ Ի Ն Մ Ա Ջ Ե Ղ Է Ն Ե Ն Ե Ր
ամառայ շրջանից երկուց եւ այժմ Թիֆլիսում
խանութ բանարով ընդունում եւ ամենայն
տեսակ մազեղեններ պահպանելու:

Խանութն գտնվում է Գանձափայտ փո-
ղոց, առև պոլիֆեիկ Թահնապարտի № 14.

Այս մտ օրերս ստացայ ամենայն տեսակ
ամառային արկիներ, սե մահազ և շատ
ուրիշ տեսակ ապրանքներ:

Ա. Տեր-Յակոբեան
2—3

ՔԱՐՏԷԶ ՆԱԻԿԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Էյս տեսալ ՔԱՐՏԷԶ ՆԱԻԿԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ-
Ի հիւսուած էրօպական հեղինակների
աշխատանքից շարունակելից վենետիկա-
ների կրեք ուղղիւնաց ջարտեղի կէտից
աւել մեծութեամբ (մաշտարով):

Գին է 25 ԿՈՒ

Վաճառվում է, «Կենտրոնական» և «Կով-
կասեան» գրապահատոնցներում:

Աւետեք Տեր-Յակոբեանց

1—5

Въ Редакції газеты

«МШАКЪ»

Продается

БРОШЮРА

**«ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.»**

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

ԲԱԼԶՍՄ

«Ք Օ Ր Մ Ա Ն Ի»

Արուարին գործածութեան համար
ԽՕԼԵՐԻՆԱՅԻ, ՈՍԻՐԱՅԱԻ, ԱՏԱՄՆԱՅԱ-
Ի ԳԷՄ և այլն, ներքին գործերի միտա-
րութեան ԲՃՇԱԿԱՆ Խորհուրդից թոյ-
լատուած: Գլխաւոր պահեստը ամբողջ
կողմանի համար:

ԳԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆԻՆԵՐԻ ԱՌԵՏԻԻ
ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ, որ առաջ
պատկանում էր Ա. ՄՈՒՐԻՆՈՎԻՆ և
ԸՆԿ., Թիֆլիսում:

7—10 (Ե. Տ. Շ.)

ԾԱԽՎՈՒՄ Է նորերում կառույց-

ված երեք յարկանի ամեն տեսակ յարմա-
րութիւններ ունեցող մի ՄԵԾ ՏՈՒՆ,
որի մէջ կան 30 մարդու սենեակներ, 5 խո-
հանոցներ, 5 պահեստի սենեակներ, 7 մա-
ռաններ, 2 սառուցաններ, 1 լուսարարի
սենեակ, 3 մուտքեր և 5 նախասենեակներ:

Ցան մէջ կայ մի փուռը առանձին սենեա-
կով և մասնով: Տուր երեք կողմերից փո-
ղոցի վրա է և մուտքեր ունի: Տարեկան
3,500 ռուբլ գուտ եկամուտ է տալիս և
գրու է զբաղած անուականների բանկում

18 հազար ռուբլով: Ցանկացողները գնել
այդ տունը բանկի պարտքի փոխանցու-
թեամբ կարող են դիմել տան տիրոջը Խակ
Պուզինովին, որ բնակվում է նոյն տանը
Նորաշենակայա և Գլորեանակայա փողոցնե-
րի անկիւնում, պոլիցիական 6-ր բաժնում,
№ № 133, 134 և 135:

1—2 (5)

ԳՐԻԳՈՐ ԿԱԶՄԱՐԱՐԵԱՆԸ

պատիւ ունի յայտնել յարգելի Հասարակու-
թեանը, որ նա ԲՕՐԺՕՄՈՒՄ ունի իր
սեփական ՀԻՐԱՆՈՅԸ, ուր թէ ամա-
րանոց եկողները և թէ ձանապարհորդները
կարող են գտնել ամենայն ՅԱՐՄԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ ունեցող ՍԵՆԵԱԿ-
ՆԵՐ և պատրաստ ՃԱՇ:

1—5 (2)

ՆԻՐՈՊԱԿԱՆ ԱՊՐԱՆԻՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ
ВЪ СКЛАДѢ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ
Մարմնում գտնվում է 144 քաղաղ գինեակ
գինեակներ, որոնց գինեակը 4 կինեակ
Սոխու Փարիզիցի ամեն տեսակ ՄԵՐՏԻ, նոյնպես Խաղաղու-
թեամբ և ՏԵՐՄԱՆԱԿՆԵՐԸ:
35—60

ՄԱՍՈՒԻ ՏԱԿ Է և շուտով այս կր տեսնի «ԷՍ ԷԼ ԻՄ ՍԱԶԸ»
Ազգային, սիրոյ, ժողովրդական երգիծարանական... բանաստեղծութեանց 1 հա-
տոր: Գինն է ձանապարհի ծախքով հանդերձ 1 ռուբլ:
Օտարաբարարացիք թող բարեհաճեն դիմել հետեւեալ հասցեներին՝ Ивану
Семеновичу Степанову, въ Тифлисъ. (въ конторѣ фабрики Сали-
оглы). կամ ուղղակի հեղինակին—черезъ Прокоевское почт. Отдѣл.
въ гор. Св. Креста (Ставропольск. губ. на Кавказѣ) учителю Семе-
ну Сафарианцу.
ՅՈՎ. Ս. ՍՏԵՓԱՆԵԱՆՑ:
3—3

Պատիւ ունի յայտնել ձեզ, թէ անցեալ մարտ ամսի կէսից այլ ևս
կարելու մեքանաների ջինկեր ընկերութեան ներկայացուցիչ լինելը թողի,
միացայ ԱՌԻՑԵՐՄԱՆ Ֆիրմայի հետ և բաց արի ԿԱՐԵԼՈՒ գա-
նաղան ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐ ՊԱՇՏՊԱՆՑ Երևանի հրապարակի
վրա գնեւերով ՏԷՐ-ՍԱՍՏՈՒՐՈՎԻ տանը:
Երկար ժամանակից ՓՈՐՉՈՎ տեղեակ լինելով այս տեղի պի-
տոյքներին և ՍՄԵՆԱԼԱԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻՑ կատարեալ-
գործված ձեռագործներ ունենալով, մի և նոյն ժամանակ բարդաւորված
լինելով լաւ անուովս, կը յուսամ, որ կը շարունակէք ընծայել ինձ ձեր
հաւատարմութիւնը, որ կը ցանկանայի նոր գործով արդարացելը:
Խնդրում եմ ընդունել իմ առ ձեզ խորին յարգանքս:
Ի Ր Ի Մ Ե Ա Ն
1—2 (4)

JOURNAL D'ORIENT
HEBDOMADAIRE
Paraissant a VIENNE (Autriche)
ABONNEMENTS: 1 an. . . . 8 roubles
6 mois. . . . 4 —
REDACTEUR EN CHEF F. Salles.
1. Weihburggasse 9. (Vienne)

Մի ջի փողոց, Կաթօլի շէտկայա փողոցի անկիւն, № 13.
Աւելի էփան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. վԻԵՆԱՅԻ ՄԵՔԵԼ ամե-
նայն տեսակ, Ֆրանսիական և անգլիական երկաթէ կՐԱՎԱՔՆԵՐ 8—30 ռ., չա-
մաղաններ 250—25 ռ., սակփոյտներ 1. 30—12 ռ., սոււն զուրկ են եր ձա-
նապարհի 6—35 ռ., մարաններ (портреты) 6—25 ռ., սա մօ վարն եր
60 կ.—1.25 Ֆուռուր, կուլսոնի պղնձ ամաններ, Գերմանիայի երկաթէ էմալով
ամաններ. ու մի վայնի կն եր մրա մօ ընի 38 ռ.—75 ռ., հրացաններ
երկու լուանի 6—32 ռ., ու է վոլվէրներ ու մենայն տեսակ 3. 50—30
ռ., պատրաններ (գուլաններ) րէկոլվէրի, սիգար Ռէզարդի Փարիզից, պապի-
րուս և թամբալու Կուշարովի գրիչի պապիրովի 5,000 ՖՈՒՆՑ ՔՅՑ (չոյ) եղ.
ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկիտ. (սուխար չոյու և կաֆէի) Երեւանի կօֆէ Երեւանի
Միլիտարի. Պետերբուրգու 40—1 ռ. 25 կ. հայկիկներ ամենայն տեսակ
28 կ.—240 ռ., պրոբկայ գինեկաճառների, հանրային և գարեջրի (для
зельтерскихъ водъ и пива) գուլթուկ (пучк), պարտաներ սամովարի և
չոյու, զանակ չանգալ զանազան ֆարբիկաների 1 ռ. 20 կ.—25 ռ. դուժինը-
գրչակիներ 1 ռ. 80 կ.—5—60 կ. զանակ ջիւրի 1—60 կ.—12 ռ., դա-
նակ հացի 20 կ.—1 ռ., հատը, կուխանի 1—40 մինչև 3—20 կ. պրիբոր-
միս կորելու մաշնայ. Անգլիական ու թոններ, Բրիտանակի չոյիկներ, կաֆէի-
նիկներ ամենայն տեսակ, Չաղացներ կաֆէի համար, ֆիրտեր—Չուր մարբուր,
կրակնայ կարթիկի 18 կ., վաքս ճրտանայի ծախք, թուղթ փոշուի, կանխրու-
ներ, սուրբուչ, մախրա, գրիչ երկաթէ, գրչակի, քարտախառակ, թանաք,
թանաքամաններ, պրեսպապիկներ, գրչակի սեղանի և չոյու Ֆրաժէ, վարչակի
և բրիտանակի դուժինը 1—50 կ. մինչև 12 ռ., և չոյու 45 կ.—5 ռ., չու-
միլիէք 45 կ.—5 ռ., շամաղաններ ամեն տեսակ 25 կ.—12 ռ. Չուխտ, պու-
սակաշիաններ վարչակու, ՌԵՉԻՆԻ ԿԱՎՈՆԵՐ, ամեն տեսակ գուլթաններ կա-
նանց և մարդիկանց 15 կ.—50 կ. Չուխտ, շապիկներ, մարդիկանց գալուս-
տիկներ, գոնաիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրեի և չոյի, սանդղի շի-
մայու ոսկրե, գուտակերչովի և փայտե, շոտկաներ գլեխի շորի, սպալիկ, պրի և
կարտի համար, չուլի թէլ (бумага) մատակի կօֆի և շալէ (гарусь) Ֆէ-
չատիէք մարդիկանց և կանանց, պորտմաններ, քիսաներ, պապիրուսի ամաններ
և մանր գոյանտերիչի ապրանքներ, սպալն ամեն տեսակ 3 կ.—30 կ.,
կտոր, հոտապէտ ջրեր, պուրթա, Գլիցերին ջրի քացախ, հոտապէտ պարաշիկներ
ԿՈՒՆԵՐ ԼԱՐՔՈՍԱՐԻՑ: և այլն և այլն և այլն:
Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերցիշեալ սպ-
րանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՔԱՅԻԼ ՏԷՐ ՆԿԿՈՎՈՒ-
ՍԵԱՆՑԻ պահեստում. (въ складѣ) միջի փողոցում կաթնովից փողոցի ան-
կիւնում № 13.
Օտարաբարարացիք կարող են դիմել հետեւեալ հասցեով. Тифлисъ Ми-
хаилу Н. Теръ-Никогосову.
45—180
Մի ջի փողոց, Կաթօլի շէտկայա փողոցի անկիւն, № 13.